

Ա. Ա. Աբրահամյան

ՓԱՍՏԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԵՎՈՒՅՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դարերի ընթացքում լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների հիման վրա ծավալվող փոփոխությունները ընդգրկում են նրա կառուցվածքային՝ ու արտահայտչական բոլոր բնագավառները՝ ինչպես քերականական կառուցվածքն ու բառային կազմը, այնպես էլ հնչյունային կազմը: Բնարկե, այդ փոփոխությունները ծավալման ընթացքով ու բնույթով բոլոր դեպքերում նույն պատկերը չեն ներկայացնում:

Լեզվի հնչյունափոխական իրողությունները բազմազան են՝ թե՛ արդի և թե՛ պատմական առումով: Լեզվաբանական գիտությունը սահմանում է նրանց տարբեր տեսակները: Այն, ինչ ընդունված է կոչել ընդհանուր պատմական հնչյունափոխություն կամ ավելի ամփոփ՝ պատմական հնչյունափոխություն, իր մեջ ընդգրկում է հնչյունային այնպիսի փոփոխությունները, որոնք առաջ գալով հնչման մեջ և այն հեռացնելով սկզբնական վիճակից, դարերի ընթացքում ձևավորում են լեզվի փոփոխված և նորից ավանդական դարձած արտասանությունը: Սա, անշուշտ, չի նշանակում, թե հնչյունափոխական մյուս տիպերը բոլորովին զուրկ են պատմականությունից:

Ընդհանուր պատմական հնչյունափոխությունը հատուկ է ամեն մի լեզվի, սակայն արտասանվածքի պատմական փոփոխության պատկերը՝ անցյալ և ներկա վիճակների համեմատությամբ, ավելի հեշտ է դիտել և ցույց տալ հատկապես գիր ունեցող լեզուներում, քանի որ ժամանակի ընթացքում կատարվող փոփոխությունները, որ հանգեցնում են արտասանության ե գրության տարբերության, ցայտուն են դառնում հենց նույն գրության համեմատությամբ: Սակայն գրությունն էլ (առանց հետագա փոփոխությունների) արտացոլում է գործադրման ժամանակաշրջանի արտասանությունը: Նախագրային շրջանի, ինչպես և գիր չունեցող լեզուների համար որոշ արդյունքներ է տալիս պատմա-համեմատական մեթոդի կիրառումը: Դրավոր հնագույն հուշարձանները ներկայացնում են տվյալ լեզվի հին արտասանությունը, որ կենդանի բանավոր խոսքում մի կեսի վրա չի կանգնում, ժամանակի ընթացքում կրում է զանազան փոփոխություններ, որոնք տեղի են ունենում աստիճանական ու դանդաղ ընթացքով, իսկ հետագայում, երբ նրանք ընդհանրանում ու վերածվում են ընչյունական հաստատուն օրենքի, իրենց հերթին կարող են արտացոլում գտնել նաև դրության մեջ, որպես լեզվի տվյալ շրջանի օրինաչափ իրողություններ: Բայց, այդուհանդերձ, միշտ էլ գրավոր խոսքը այդ տեսակետից ավելի պահպանողական է բանավորի համեմատությամբ և անմիջապես չի արտացոլում արտասանական փոփոխությունները: Հենց դա է պատճառը,

որ այսօր ընդհանուր պատմական հնչյունափոխության շատ երևույթների անմիջական հիշատակումները չունենալով մեր գրավոր հուշարձաններում՝ գծավորանում ենք որոշել նրանց սկզբնավորման ու ձևավորման ժամանակաշրջանը, որը չափազանց կարևոր է լեզվի պատմության ուսումնասիրության համար: Հասկանալի է, որ սկզբնավորող երևույթը տարրերություն ունենալով տվյալ շրջանի ընդհանուր գրավոր լեզվի մշակված կանոնների հանդեպ, գիտվում է սխալ ձև ու չի ներառվում գրություն մեջ, քանի որ շարադրողը չի ենթադրում, թե դա սկիզբն է մի երևույթի, որը առանձնարար ծավալվելու և վերածվելու է ընդհանուր օրինաչափության, մինչև որ դանդաղ, բայց հետևողականորեն ընդհանրանում, դառնում է անժխտելի փաստ և թափանցում է նաև գրավոր խոսքի մեջ: Ահա թե ինչու ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն թեկուզ և մասնակի այն փաստերը, որոնք այս կամ այն կերպ արտացոլում են գտել գրավոր հուշարձաններում և ավանդվել մեզ:

Հետաքրքրական պատկեր ունի հայոց լեզուն պատմական հնչյունափոխության իր հարուստ երևույթներով: Այդ երևույթների ուսումնասիրման ու նկարագրման ուղղությունը բավականաչափ աշխատանք տարվել է. գիտությունը հայանի են գրեթե բոլոր գեագրերը: Սակայն գրանց կազմավորման ու ձևավորման ժամանակաշրջանի որոշման և գրա հետ կապված առանձին հարցերի պարզարանման գործում դեռ շատ աշխատանք է պահանջվում: Այս տեսակետից հատկապես պետք է նշել ակագ. Հ. Աճառյանի աշխատությունը՝ Վ հնչյունի պատմական փոփոխությունների և ռ-ի վերջնական ձևավորման ժամանակի որոշման վերաբերյալ:

Մեր նպատակից դուրս է հայոց լեզվի ընդհանուր պատմական հնչյունափոխության երևույթների ամբողջական քննությունը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում մատնացույց անել մի քանի փաստեր, որոնք կարևոր են այդպիսի առանձին երևույթների ձևավորման ժամանակաշրջանի մոտավոր որոշման համար:

ա) Ա₁ > 0 (ռ)

Ա₁ հնչյունակապակցությունը հին հայերենի երկրարրաոններից մեկն էր: Վաղուց պարզված է, որ այն իբրև երկրարրաո հայ գրերի ստեղծման շրջանում փակ վանկում ուներ յուրահատուկ միասնական արտասանություն: Այդ երկրարրաոը կազմող տարրերից մեկը լ-ն բառի կազմում գրաված տարրեր գիրքերում հետագայում պատմական դարգացման տարրեր ընթացք ունեցավ. բառամիջում ձայնավորից առաջ և բառավերջում թանձրանալով նույնացավ Վ-ի հետ, իսկ փակ վանկում շանջատվեց երկրարրաոի մյուս տարրից՝ ա ձայնավորից և փոփոխություն կրեց նրա հետ միասին: Եթե զարգացման այսպիսի ընթացքը բխում էր հենց 5-րդ դարում նշված տարրեր գիրքերում լ-ի ունեցած արտասանական թեկուզ և չափազանց նուրբ տարրերություններից, ապա այդ տարրերությունները նախապես դուրս չէին գալիս ձայնորդի սահմաններից և ոչ մի գեագրում չէին նույնանում Վ-ի հետ: Հենց միայն մեարսվյալն այրուքենում լ և Վ

¹ Հ. Աճառյան, Երբ և դարձավ դ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Երևան, 1948, № 5:

նշանագրերի առանձին դոյությունը նշանակում է, որ դրանք ստեղծվել են որպես տարրեր հնչյութների արտահայտիչներ։ Անկախ առումով, իրրե առանձին հնչյութ չեն եղել է ձայնորդ, իր հնչյունական որակով այն դրավում էր միջին դիրք այժմյան ու ձայնավորի և Վ բաղաձայնի միջև, մոտավորապես արդի անգլերենի W ձայնորդի նման (հմտ. we, well և այլն)։ Դիոնիսիոս Թրակացու «Τέχνη γράμματος»-ի թարգմանիչը հայերեն թարգմանության մեջ այն տեղագրել է հունարեն յ-ի դիմաց իրրե նրա համարվեք, թեև հայերենն էլ ներկայացված է ձայնավորների շարքում¹։ Իսկ սա բացատրվում է նրանով, որ հունական յ-ն այդ շրջանում արտասանության արդեն փոփոխված էր, բայց 6—7 դար առաջ դրված քերականությանը դրության պահպանում էր նախկինը։

Միանգամայն պարզ է, որ հայերենի երբեմնի լ ձայնորդի հետագա նույնացումը Վ-ի հետ պատմական փոփոխության արդյունք է²։ Արտասանության մեջ տեղի ունեցած այդ փոփոխությունը դրության մեջ պաշտոնապես օրինականացվելուց դեռ շատ առաջ տեղ-տեղ արտահայտվել է իրրե շեղում ժամանակի ընդունված ուղղագրությունից։ Նիշենք, օրինակ, Աւան տեղանվան Ավան գրությունը 10-րդ դարում, ՆԼ (981) թվականի վրամական մի արձանագրության մեջ (յԱվանէ), ընդունելով, որ փոփոխությունը ուղղակի վկայությունից էլ առաջ կարող էր լինել։

Սակայն, ինչպես նշվեց, լ հնչյունի պատմական փոփոխությունը փակ վանկում ընթացավ այլ ուղղությունով։ Այդ մասին կարելի է խոսել բաղաձայնից առաջ այդ հնչյունը պարունակող երկրարրառի կրած պատմական փոփոխության կապակցությամբ՝ նրա բաղկացուցիչ տարրերի միասնական առումով³։

Մեր հին գրավոր լեզվի աւ երկրարրառը բաղաձայնից առաջ, անկախ շեշտից, պատմականորեն հնչյունափոխվելով, ժամանակի ընթացքում վերածվել է օ պարզ ձայնավորի, ինչպես՝ աւր>օր, աւծ>օծ, տաւն>տօն, առաւաւտ>առաւօտ և այլն։ Հայտնի բացառություններն են՝ աղաւնի և նաւը, որոնք գրական լեզվում չկրեցին այդ փոփոխությունը։ Առանձին բարբառներում սրանք ևս ենթարկվում են ընդհանուր օրենքին և վերացնում բացառությունը։ Նիշենք նօք արտասանությունը մեր շատ խոսվածքներում (Դիլիջան, Իջևան, Շամշադին, Կարմիր, Լոռի և այլն), իսկ աղաւնի բառի համար հատկանշական են ըղօնի (Ագուլիս), յէղօնէգ⁴, դօնէգ⁵ (Ղարաբաղ)⁴, ըղօնէ (Մեղրի)⁵ ձևերը։ Հյուրըմանն աղաւնի բառի մասին այն կարծիքն է հայտնել, որ նա հին հայերենում արտասանվել է աղաւընի, և այդ պատճառով էլ աւ հնչյունախումբը ընկնելով ը ձայնավորից առաջ, օ-ի չի վերածվել⁶։ Ընդունելով այդ, Հ. Աճառյանը միաժամանակ ենթադրում է, որ այդպիսի արտասանությունը զուգահեռ պետք

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб, 1915, стр. 6.

² Այս հնչյունների տարբերության մասին տե՛ս նաև Հ. Աճառյան, «Հայոց գրերը», Վիեննա, 1929, էջ 143։

³ Ի-ով կազմվում էին նաև այլ երկրարրառներ, սակայն այստեղ նկատի ունենք միայն աւ-ը։

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արժատական բառարան», հատ. 1, էջ 127։

⁵ Տե՛ս Է. Աճառյան, «Մեղրու բարբառը», Երևան, 1954, էջ 261։

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 127—128։

է լինելը նաև առանց ք-ի արտասանություն, որից կարող էին առաջանալ բարբառային օ-ով ձևերը¹։ Կա նաև այն կարծիքը, որ արդի գրական լեզվում գործածվող նավթ բառը արդյունք է նոր փոխառության, հինը շարունակվում է նօթ բարբառային ձևի մեջ²։

Աւ երկրարբառի պատմական հնչյունափոխության օրենքը չի գործել նաև՝ ա) քերականական մասնիկների (հոգեր, հոգնակիության և հոլովակերտ մասնիկներ) հավելման դեպքում, ինչպես՝ հաւք, կաքաւք, նաւք (հոգն. ուղղ.), (զ)հաւս, (զ)կաքաւս, (զ)նաւս (հոգն. հայց.), առակաւդ (= այդ առակով), համբաւս (— այս համբավը), կտաւն (= այն կտավը կամ կտավը) և այլն. բ) շեշտափոխության դեպքում, երբ աւ հնչյունախմբից հետո եղած ձայնավորը սղվում է, և այդպիսով աւ-ը ընկնում է բաղաձայնի մոտ, ինչպես՝ շաւիղ-շաւղի, շաւղաց, Դաւիթ-Դաւթի և այլն։ Անկասկած է, որ նման դեպքերում աւ հնչյունախմբին ըստ արտասանության հաջորդում էր ը ձայնավորը, որը արգելք էր հանդիսանում հիշյալ հնչյունախմբի երկրարբառային արտասանությանը, իսկ հետագայում էլ՝ նրա հնչյունափոխմանն ու պարզմանը, թեև գրաբարյան հին բնագրերի այժմյան մեր ընթերցանության մեջ այդ բոլոր դեպքերում ը ձայնավորը հավասար ուժով չի արտասանվում։ Այսպես՝ հոգնակի ուղղականում (հաւք, կաքաւք և այլն) և շեշտափոխության դեպքում (շաւղի, Դաւթի և այլն) չափազանց թույլ է, իսկ հոգնակի հայցականի մասնիկից ((զ)հաւս, (զ)կաքաւս և այլն) և հոգերից (առակաւդ, կտաւն, համբաւս և այլն) առաջ՝ ուժեղ ու ցայտուն։ Հավանաբար այս տարբերությունը շատ ուշ ժամանակի գործ է, այլապես աւ երկրարբառի պատմական հնչյունափոխության օրենքը չէր կարող հավասարապես անտարբեր լինել այս բոլոր դեպքերի նկատմամբ։ Եման դեպքերից առանձնանում է հոգնակի գործիականը, որտեղ ք-ից առաջ աւ հնչյունախմբը ենթարկվում է ընդհանուր օրենքին, վերածվելով օ-ի (աշակերաւք>աշակերտօք, քաղաքաւք>քաղաքօք և այլն)։ Կարելի է ընդունել, որ օրենքի սահմանավորման շրջանում, հատկապես անեզական բառերի մեջ, գործիականի մասնիկների խումբը (ա+ւ+ք=աւք) ըմբռնվում էր որպես մի ամբողջական վերջավորություն, որտեղ միշտ հարկ չէր լինում առաջ բերել իմաստային հակադրություն եզակի ձևի համեմատությամբ (այդպիսի բառերի երկու թվի գաղափարն էլ արտահայտվում էր մէկ ընդհանուր ձևի մեջ)։ այստեղ բառի հնչյունային շղթայի մեջ աւ հնչյունախմբի և ք հնչյունի միջև ստեղծվում է արտասանական սերտություն, և այսպիսով աւ-ը ենթարկվում է ձևավորվող հնչյունափոխական օրենքին, ինչպես՝ յարգանաւք>յարգանօք, տանջանաւք>տանջանօք, փառաւք>փառօք և այլն։ Այստեղից էլ այն տարածվում է մյուս բոլոր բառերի վրա, որոնք գործածվում են թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով, ընդգրկելով հոգնակի գործիականի բոլոր դեպքերը, որտեղ կա աւ հնչյունախմբը ք-ից առաջ։ Հարցի ըմբռնմանը կարող է օգնել նաև իւ հնչյունախմբի արտասանության զուգադրումը ուղղական և գործիական հոլովներում. այսպես՝ անիւք (հոգն. ուղղ.) և բանիւք (հոգն. գործ.) բառաձևերում իւ հնչյունախմբը թեև արտասանական բոլորովին նույն պայմաններում է, սակայն ավանդական ընթերց-

¹ Տե՛ս Հ. Անառյան, «Հայերէն արմատական բառարան», հատ. 1, էջ 127—128։

² Վ. Առաքելյան, «Ժամանակակից հայերէնի հնչյունաբանություն», Երևան, 1955, էջ 121։

մամբ տարրեր հնչում ունի, ուղղականում՝ իվ (անիվք), գործիականում՝ յու (բանյութ), իսկ ժամանակակից հայերենի տեսակետից տարրերություն չկա. գրաբարի արտասանական օրենքներին անծանոթ մարդը գրանք կկարդա «անիվք», «բանիվք»¹։ Ուրեմն՝ թե՛ աւ, թե՛ իւ հնչյունախմբերի գեպքում հոգնակի ուղղականը և գործիականը ենթարկվում են արտասանական տարրեր կանոնների։ Այս հոլովներում աւ (ինչպես նաև իւ) հնչյունախմբի արտասանության տարրերության գործում դեր ունի նաև բառապատկերի պահպանման հանգամանքը, որը զուգակցվելով արտասանականին (ուղղականում ք-ից առաջ ը-ի թույլ արտասանությունը) թույլ չի տվել, որ աւ-ը արտասանվի իբրև երկրարբառ ու այգպիսով հետագայում էլ ենթարկվի պատմական նշյունափոխության² հոգնակի ուղղականում։ Հակառակ գեպքում, օրինակ, հաւ բառը հոգնակի ուղղականում պիտի դառնար հօ(ք), եղակիում մնալով հաւ, այսպես էլ՝ կաքաւ-կաքօ(ք), քաւ-քօ(ք) և այլն, փոխանակ՝ հաւք, կաքաւք, քաւք և այլն։ Այլ է ըստ օրենքի առաջացած միօրինակությունը երկու թվում էլ, ինչպես՝ օձ-օձք և այլն։ Հակառակն ապացուցելու համար չի կարելի որպես փաստ ծառայեցնել մի քանի սակավաթիվ բառեր, որոնք առանձին ձևերում տարրերություն ունեն։ Դրանցից որպես օրինակ հիշենք աւը (օր) բառը, որը մի քանի ձևերում պատմական նշյունափոխությամբ արտահայտվում է օ-ով՝ օր, զօր, յօրե, որոնք եզակի թվի ձևեր են, իսկ հոգնակիում, հասկանալի պատճառով (աւ-ը չի հանգիպում բաղաձայնի) օ-ով ձևեր չկան՝ աւուրք, աւուրց և այլն (իհարկե, խոսքը գրաբարի մասին է)։ Եզակի թվի նշված ձևերով նրա բառապատկերը չի կորչում. բանն այն է, որ այս թվում փոփոխված ձևերի հետ կան նաև հին ձևեր՝ աւուր, աւուրք. այս գեպքում առգեն փոփոխված ձևերը անհասկոնալի չեն դառնում հին ձևերի համեմատությամբ։ Այս տեսակետից խոսք չի կարող լինել գործիականի՝ վերը հիշված տարրերությունների մասին եզակի և հոգնակի թվերում (քաղաքաւ, քաղաքօք և այլն), քանի որ այդ փոփոխությունները չեն փոխում բառի հիմնական պատկերը։

Այս է հին հայերենի աւ երկրարբառի պատմական նշյունափոխության և նրա հետ կապված մի քանի առանձնահատկությունների ամփոփ պատկերը։ Ձևափոխված ընդհանուր օրենքն այն է, որ աւ-ը, որպես երկրարբառ, դարերի ընթացքում պարզվում և օ ձայնավորի է վերածվում փակ վանկում, բաղաձայնից առաջ և հետագայում գրություն մեջ էլ օրինականանում է հատուկ տառով (օ), որպիսին մեսրոպյան այբուբենում չկար։ Սակայն ուշ միջնադարում հայկական ձեռագրերում օ հանգիպում է նաև այնպիսի տեղերում, որտեղ չպիտի լիներ, այսինքն բառամիջում, ձայնավորից առաջ և բառավերջում, ինչպես՝ առօօտ (առաւօտ), առակօ (առակաւ), մեղօոր (մեղաւոր) և այլն։ Այսպիսի ձևերը հագիվ թե արտասանական հիմք ունենային, ավելի ճիշտ՝ մի տեսակ գրային բաղարկության հետևանք են։

¹ Գուցե և ը-ով՝ «անիվքը», «բանիվքը»։

² Հայագիտության մեջ կա նաև այն տեսակետը, որ աւ, իւ, եւ հնչյունախմբերը բառավերջում ևս երկրարբառ էին. տե՛ս Հ. Անալյան, «Հայոց գրերը», Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն» և այլն։

Ինչպես ընդհանուր պատմական հնչյունափոխության ամեն մի երեւոյթ, այնպես էլ աւ երկրարրառի փոփոխությունը կատարուել է գանգաղ և տեղականորեն. բայց նոր է այն որոշակի արդյունքի հանգել: Հայագիտության մեջ դա վերագրուում է 12—13-րդ դարերին: Տարրերակելով արտասանության մեջ կատարուած փոփոխությունը գրության մեջ նրան հատկացւող առանձին նշանագրի գործադրումից, կարելի է ասել, որ այդ հնչյունափոխությունը որպէս օրենք երևան է եկել ավելի վաղ, բայց ոչ նախագրային շրջանում: Այդ մասին նաև այն կարծիքն է հայտնուել, թե դա տեղի է ունեցել դեռ նախագրային շրջանում, որի համար իրրեւ փաստարկ մատնացույց են արվում զող, կով, նորին, նորա բառաձևերը՝ ենթադրյալ *գաւղ, *կաւլ, *նաւրին, *նաւրա ձևերի գիմաց¹: Այս վերջին ենթադրյալ ձևերը արդյունք են ոչ ճիշտ ստուգարանության: Գող հնդեւրոպական արմատ է և սերտորեն կապուած է գաղել՝ «ծածկել» և բարրառային գեղել ծածկել, թաքցնել» բառերի հետ. արմատի զող, գեղ, գաղ ձևերը երևան են բերում հնիւ. vol, vel, vl ձայնգարձները², այնպես որ գծվար է ընդունել գաւղ ենթադրյալ ձև: Կով արմատը ծագում է հնիւ. g^wov-ձևից³: Ծիշտ է. սանսկրիտն ունի paus, պարսկերէնը՝ gav «եզ», սակայն բացարձակ գերակշռություն ունեն օ-ով, այլև u-ով ձևերը, ինչպես պհլ. go, բելուջ. gok, Վիւփ, եզ, հինգուստ. go Վիւփ, gurū Վիւփ, եզ, հրգ. kuo, chuo. հաքս. ko, գերմ. kuh Վիւփ, հոլ. koe, անգլ. cū, անգլ. kow Վիւփ, հոլ. govedo «եզ», ռուս. говядо «տավար», говядина «տավարի միս», հուն. βοῦς (սևո. βοφός), լատ. bos (սևո. bovis) Վիւփ, եզ և այլն⁴: Հայերեն կով արմատի հետ սերտ կապ ունի կոզի Վիւփազ բառը⁵: Նորին և նորա ձևերը նոյն և նա գերանունների սեռական հոլովաձևերն են, իսկ այդ գերանունները ծագում են հնիւ. ու արմատից: Սեռականի ձևերում հանգես կողո ո հնչյունը, ուրեմն, գալիս է արմատից և ոչ թե իրականում գոյություն չունեցող աւ-ից:

Այս խնդրի համար չափազանց ուշագրաւ է հին հայերենի ենթակալական գերրայի գերրայական մասնիկի -աւղ և -ող ձևերի առկայությունը մեր հին գրավոր հուշարձաններում: Ոնգիրն այն չէ, թե սրանք կարող էին տարբեր ծագում ունենալ, այլ այն, որ հաճախ նույն բայը հանգիւպում է և՛ -աւղ-ով, և՛ -ող-ով, որպիսի գրությունը բազմիցս նշվել է գրարարի քերականների կողմից: Թերևս արտասանական այս դուգահեռությունը գալիս էր հենց 5-րդ դարից: Հնարավոր է, որ հնչյունական այս տարբերությունը լինելու բառական-քերականական մի նախնական երևույթի արդյունք, երբեմնի քերականական տարբեր իմաստների (-աւղ-ով և -ող-ով արտահայտված) հետագա նույնացման հետևանք: Բայց սրա համար առաջում ապացույց չունենք: Եթե այս երևույթը աւ երկրարրառի հնչյունա-

¹ Н. Я. Марр, Грамматика древнеармянского языка, СПб, 1903, стр. 10, прим. 2.

² Տե՛ս Ն. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», հատ. 2-րդ, էջ 247—248, այլև՝ էջ 34—36 (գաղտ բառի տակ):

³ Նույն տեղում, հատ. 3-րդ էջ 1345.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 1265:

⁶ Նույն տեղում, հատ. 5-րդ, էջ 3—4 և 165.

փոխությունն սաղմնավորումն է ցույց տալիս, ապա բավական երկար ժամանակ ենթակայական դերայի սահմաններից դուրս չի գալիս, երկար ժամանակ մասնակի բնույթ է կրում, Կեո չվերածվելով ընդհանուր հնչյունական օրենքի այդ երկարությանը պարունակող բոլոր բառերի ու բառաձևերի մեջ:

Հիշյալ երկարության պատմական հնչյունափոխության ձևավորման ու տարածման փաստեր կան ավելի ուշ շրջանում: Առայժմ կարող ենք ասել, որ ուսումնասիրությունը պարզում է նրանց առկայությունը 10—11-րդ դարերում, վկայված առանձին վիմական արձանագրություններով: Վաղ վկայությունը վերաբերում է 10-րդ դարի սկզբին: Նկատի ունենք պաշտոնեայք ձեռ Շապուհ Բագրատունու ՅԾԲ (903) թ. արձանագրության մեջ¹: Եթե իրոք սա ստույգ է (վերծանողներից Շահխաթունին և մանավանդ Մմբատյանը հավաստում են տառացի և զգույշ ընդօրինակման մասին, թեև ունեն տարբերություններ, բայց ոչ այս բառի մեջ), ապա կարելի է խոսել հնչյունափոխության արտացոլման մասին: Գրաբարում պաշտառնեայ բառի ընդունված ձևը աւ-ով է, այն ածանցված է պաշտառ բառից, իսկ սա էլ պաշտ փոփոխված արմատաձևից, որը բխում է պարսիշտ-ից²: Պաշտառն բառի զանազան հոլովաձևերը (պաշտաման, պաշտամունք, պաշտամանց և այլն) ցույց են տալիս, որ նրա կազմում չէր կարող ու լինել, Կա հետագա հնչյունափոխական երևույթի գործ է: Իսկ նույն տեղում գործածված աենչանովք (փոխ. տենչանաւք) ձևում ուլ-ը ձևարանական հիմունքով է (ուլ վերջավորության տարածում):

Դննարկիող երևույթի համար անժխտելի ու միանգամայն փաստելի են հետևյալ փաստերը: 10-րդ դարի երկրորդ կեսի մի արձանագրություն մեզ բնծայում է փառք ձևը: Արձանագրության լուսանկարը և վերծանումը բերված են Գ. Հովսեփյանի «Քարտէզ հայ հնագրութեան» աշխատության մեջ³: Դա Գրիգոր Համդե Պահլավունու արձանագրությունն է՝ Անիի Ասուղամբենց ս. Գրիգորի արևելյան պատին՝ ՔԲ ած յորժամ գաս փառք հաւր ի նորոգել զերկիր ոգորմեա Գրիգորո ծառաի քո: Բերված լուսանկարն էլ շատ պարզ է, շատ լավ կարգացվում են բոլոր բառերը, այդ թվում և մեր նպատակային փառք բառը: Հենվելով Գ. Հովսեփյանի կողմից բերված պարզ լուսանկարի և միանգամայն հարազատ վերծանության վրա, պետք է նշել, որ Ալիշանի «Միրակա»-ում տրված վերծանությունը

¹ Տե՛ս Շահխաթունի, «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւոռացն Արարտոյ», հատ. 2-րդ, Էջմիածին, 1842, էջ 251, Ալիշան, «Միսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի», Վենետիկ, 1893, էջ 60—61, Մ. Ամբատյան, «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ զաւոռի, որ այժմ Նոր-Բայազիտ զաւոռ», Վաղարշապատ, 1895, էջ 563: Մ. Զալալյանն ընդհանրապես խախտում է ուղղագրությունը, տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Բ, Տփլիս, 1858, էջ 120: Կոստանյանի «Վիմական տարեգիր»-ում պակասում են արձանագրության որոշ մասերը (էջ 6), Ե. Լալայանի մոտ բառի ուղղագրությունը տարբեր է՝ աւ-ով («Աղագրական հանդէս», 23-րդ գիրք, էջ 53):

² Սա էլ իրանյան փոխառությունն է՝ բաղադրված pari մասնիկով և sta արմատով. տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», հատ. 5-րդ, էջ 838—839:

³ «Շողակաթ» (Հայագիտական ժողովածու), Ա. գիրք, Վաղարշապատ, 1913, էջ 179, լուսանկարը՝ տախտակ ժ: Նույնը բերված է հեղինակի «Գրչութեան արուեստը հին հայոց մէջ» գործում (մասն Գ):

որոշ սխալներով է, բնագրի հետ տառացի նույնական չէ: Այստեղ «սրբագրված» է մեզ հետաքրքրող բառաձևը փառալք ձևով¹, որը թեև գրարարյան ուղղագրության տեսակետից ճիշտ է, սակայն աղավաղում է բնագիրը, ուստի և քննարկվող հարցի համար հետաքրքրություն չի ներկայացնում:

Գրարարում փառք անեզական բառը մինչև աւ>օ հնչյունափոխության ձևավորումը (ապա և գրության մեջ օրինականացումը) գործիական նյութում կարող էր հանդես գալ միմիայն փառալք ձևով, իսկ նշված փառք ձևում մենք գործ ունենք երկրարբառի պատմական հնչյունափոխության երևույթի արտացոլման հետ: Բանավոր խոսքում կատարված փոփոխությունն արտահայտվել է մեարդայան այբուբենում գործող ու տառով (մինչև օ տառի ընդունումը):

Հաջորդ փաստը 11-րդ դարի սկզբներից է: Պա բարեխոսութիւն (բնագրում ութիւն-ը պատվով՝ բարեխոսութիւն) բառն է՝ Կեչառիսի ս. Աստվածածնի տաճարի հարավային դռան կամարակապ քարի վրա փորագրված՝ Հասանի որդի Գրիգոր Մագիստոսի արձանագրության մեջ: Արձանագրությունը մեծ չէ, բերում ենք ամբողջովին. ՎՋԲ Թ. Հա. ի թագաւորութեան Գագկա եւ ի հայրապէտութեան տն Սարգսի եւ Գրիգոր Մագիստոս որդի Հասանա շինէցի զէկէզէցիս ինձ ի բարեխոսութիւն եւ իմ պատրոնին եւ իմ որդեացն. որք ընթեոնոյք դիս յաղաւթս յիշեցէք ի Քս աղաչեմ: Նպատակից դուրս համարելով արձանագրության լեզվական այլ առանձնահատկությունների հարցը, անհրաժեշտ ենք գտնում նըշել, որ ընդօրինակողներից շատերը չեն պահպանել բնագրի հարադատությունը և ուրիշ ձևերի հետ աղավաղել են նաև քննարկվող հարցի համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող բառաձևը՝ ուն «ուղղելով» աւ: Բացարձակ ճշտությամբ վերծանել է Գ. Հովսեփյանը², Քարի վրա դեռ մինչև օրս էլ պարզ երևում է ուն:

Հայագիտության մեջ վիճարկվում է արձանագրության թվականի հարցը բովանդակության հանդամանքներով: Ոմանք առաջարկում են ՆԾԲ (1003) թ., թեև արձանագրված է ՆՋԲ (1033) թ. դրան կողմնակից է նաև հենց նույն ինքը՝ Գ. Հովսեփյանը, թեև մի այլ առիթով նա նշում է, որ արձանագրության բովանդակությունը ընդգրկում է 1003 թվականը, բայց հավանաբար այն փորագրված է դրանից մի քանի տասնամյակ հետո: Եթե վերջինս իրոք ճիշտ էլ լինի, ապա դարձյալ ժամանակը 11-րդ դարի առաջին կեսից այս կողմ չի գալիս, ուստի և ոչնչով չի նսեմանում մեզ հետաքրքրող փաստի արժեքը:

Մեր հին գրավոր լեզվում խաւս (>խօս) արմատը իր մեջ ունեցել է աւ երկրարբառը, որը թեև բառափոխական, թեև բառակազմական պայման-

¹ Ալիշան, Շիրակ — տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 53:

² Համեմատել՝ Եսիխարունի, նշված աշխ., էջ 102, Ալիշան, «Այրարատ», էջ 259, Սմբատյան, նշված աշխ., էջ 349, և. Լաւայան, «Նոր-Բայազետի դաւաւ, նշանաւոր վանքեր — Կեչառիս», «Ազգագրական հանդէս», 22-րդ գիրք, Թիֆլիս, 1912, էջ 126—127, և. Կոստանյան, «Վիմական տարեգիր», Ս. Պետերբուրգ, 1913, էջ 18 և այլն:

³ «Շողակաթ», էջ 179, լուսանկարը՝ տախտակ ժև, միանգամայն պարզ ու ընթեռնելի: Տե՛ս նաև նույն հեղինակի «Քաղաքականք կամ Պոռեանք Հայոց պատմութեան մէջ» մասն Բ, Երուսաղեմ, 1944, էջ 6, մասն Գ, Նյու-Յորք, 1942—43 թթ., էջ 27:

ներում անփոփոխ է մնացել, մինչև որ պատմական հնչյունափոխությամբ ժամանակի ընթացքում վերածվել է օ-ի: Հիշյալ արձանագրությամբ մեղ ընծայվող փաստը (ո-ով) հնչյունափոխական այդ երևույթի արտացոլումն է գրության մեջ: Հաջորդ դարերում արդեն այսօրինակ փաստերն ավելանում են, երևույթն ընդհանրանում է արտասանության մեջ, և այդ հոդի վրա գրության մեջ մտնում է օ տառը:

Միաժամանակ հարկ է նշել, որ մատնանշված փաստերը պարունակող բոլոր արձանագրություններում էլ ուրիշ բառեր ունեն ալ երկրարրառը ինչպես՝ աղաւթել, յաղաւթս, հաւր: Այս նշանակում է, որ ժամանակի ընդունված գրությունն ամբողջովին չի խախտվել բոլոր բառերի մեջ, թեև անկասկած է, որ արտասանության մեջ նրանք համահարթվել էին (աւ-ի հնչման տեսակետից): Կենդանի խոսքը կրող փորագրող վարպետները չեն կարողացել հետևողական գտնվել ուղղագրության: հարցում և բանավոր խոսքի ճնշմամբ թույլ են տվել ուղղագրության տարբերություն (աւ || ո), որն ուսումնասիրողի համար շատ արժեքավոր է ու խիստ կարևոր լեզվի արտասանվածքի փոփոխության պատմականության որոշման խնդրում:

Երբեմն էլ աւ-ի և ո-ի փոխարինումը կատարվել է հակառակ ձևով, այսինքն ո-ի փոխարեն ոչ ճիշտ կերպով գործածվել է աւ. հիշենք, օրինակ, յաւգնամեղ (փոխ. յոգնամեղ) ձևի գործածությունը (2 անգամ) 988 թ. մի ձեռագրի սկզբնագիր հիշատակարանում: Սա բնորոշ է նրանով, որ գրիչը ո-ով արտահայտվող ձայնավորը շփոթել է աւ-ի տեղում արտասանվողի հետ և խառնել ուղղագրությունը, կարծելով, թե այդ ո-ի հնչման տեղում էլ պետք է աւ գրել:

Այսպիսով, ինչ են ցույց տալիս մեզ հասած այս փաստերը: Նրանք ցույց են տալիս, որ՝

1. Հին հայերենի ալ երկրարրառի պատմական հնչյունափոխությունը պարզ ձայնավորի վերածման արդյունքով բանավոր խոսքում 10—11-րդ դարերում արդեն դարձել էր անժխտելի իրողություն և տեղ-տեղ բանավոր խոսքի ազդեցությամբ արտացոլում գտել նաև գրավորում: Ամենայն հավանականությամբ օրենքը ձևավորվել էր ավելի վաղ, բայց գրավոր ուղղակի վկայվել ավելի ուշ:

2. Հիշյալ ժամանակաշրջանում հայերեն գրության մեջ դեռ մուտք չէր գործել օ տառը, այդ պատճառով էլ գրության մեջ մասնակի արտացոլում գտած աւ > օ հնչյունափոխությունը արտահայտվել է մեսրոպյան այբուբենի ո տառով, որը մեր լեզվի մի ձայնավոր հնչյունի նիշն էր:

3. Ալ երկրարրառի պատմական հնչյունափոխությամբ երևան եկած օ-ն և մեր լեզվում մինչ այդ եղած ո տառով արտահայտվող ձայնավորը որակապես խիստ մոտ են եղել, այլապես երկրարրառի փոփոխությունը երբեք ո տառով չէր կարող արտահայտվել:

Այս համեմատության մեջ նախ պետք է նկատի ունենալ աւ > օ հնչյունափոխության վերջնական ձևավորումը և ապա չպետք է ներառել ո-ի պատմական հնչյունափոխությունը բառասկզբում (փսկ որոշ բարբառներում նաև բառամիջում)՝ ՎՕ արտասանությամբ:

¹ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա (Ե դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 153:

Մեր գրավոր լեզվի պատմության հետագա ընթացքն արդեն խոսում է դրանց արտասանության նույնության մասին: Գրական լեզվում իվերջո ստեղծվում է այնպիսի դրություն, որ նույն ձայնավոր հնչույթն արտահայտվում է երկու տառով (ն || օ — գործ, տօն): 1922 թ. ուղղագրական ռեֆորմով ընդհանրապես վերացվեց այդ տարբերությունը օ տառի վերացումով, իսկ 1940 թվականին այդ տառը վերականգնվեց բառասկզբի համար՝ ի տարբերություն ո (VO)-ի: Այսպիսով, արդի գրական լեզվում նույն ձայնավոր հնչույթի համար վերստին ունեցանք երկու տառ (դրանցից մեկի՝ օ-ի զործածության սահմանափակումով):

բ) 3 հնչյունի անկումը բառավերջում

Հին հայերենում որպես ընդհանուր կանոն գրությունում մեզ ավանդված բառերը չեն վերջավորվել ա, ո (ինչպես և ը) ձայնավորներով. նման դեպքերում նրանք վերջից սահմանափակվում էին յ հնչյունով, ինչպես՝ քնծայ, շղթայ, երեկոյ և այլն, նույնը և բառափոխության դեպքում՝ Տիգրաւայ, գործոյ և այլն: Կային բացառություններ, որոնք արտահայտվում էին յ-ի բացակայությամբ՝ 1) առանձին գերանուններում՝ սա, դա, նա, քո, այլև փոփոխված՝ սորա, դորա, նորա, սոքա, դոքա, նոքա և այլն ու մի երկու ուրիշ բառերում՝ ահա, ապա, 2) բայի բուն հրամայականի երկրորդ գևաքում, սուր շեշտի մոտ՝ աղա՛, սիրեա՛, աւցո՛, փախո՛ և այլն, 3) օտար հատուկ անունների ուղիղ ձևերում՝ Փալիլիա, Յուդա և այլն: Այսպես է գրությունը մեր լեզվի հին վիճակը ներկայացնող գրավոր ամենավաղ հուշարձաններում:

Այն տեսակետն է արտահայտվել, թե իբր բառավերջի յ-ն օ-րդ դարում արդեն չի արտասանվել: Այդպես է կարծել, օրինակ, Հյուրչմանը, որը հենվելով ա ձայնավորով վերջավորվող ասորական փոխառյալ ձևերի վրա (awilā-արեղայ, satānā-սատանայ և այլն), ենթադրում է, որ դրանք հայերենում յ-ով չէին արտասանվի, քանի որ ասորական ձևերը չեն ունեցել այդ հնչյունը բառավերջում: Այս տեսակետը հերքում է Հ. Աճառյանը, իրավացիորեն նշելով, որ հայոց լեզուն վերցնելով ասորականը՝ դրանք ենթարկել է իր սեփական օրենքին¹: Հինգերորդ դարում նշված դիրքում յ-ի արտասանության իրողությունն ապացուցելու համար Հ. Աճառյանը բերում է շատ համոզիչ փաստեր²: Ամենից առաջ մի բան շատ որոշակի է. եթե գրերի գյուտի շրջանում ա և ո ձայնավորներից հետո բառավերջում յ-ն արտասանության մեջ արդեն վերացած լիներ, ապա այդ դիրքում գրության մեջ արտահայտություն չէր գտնի, ինչպես որ տեսնում ենք նույն ժամանակներում գործածված՝ վերը իբրև բացառություն նշված ձևերում. եթե, ասենք, շղթայ և սա ըստ հնչման վերջավորվում էին հավասարապես ա ձայնավորով, ապա ինչո՞ւ պիտի գրանցվեին տարբեր՝ ալ, ա. դա կհակասեր իրական վիճակին և հակառակ կլիներ ամենապարզ տրամաբանության: Գրության այդ սկզբնական տարբերությունը թելադրված էր հնչման տարբերությամբ: Հիշենք նաև այն իրողությունը, որ հետա-

Տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց գրերը», Վիեննա, 1939, էջ 318—319, նույնը և «Հանգէս ամսօրեայ», 1922, էջ 590:

² Նշված աշխ.:

գայում, երբ արդեն բառավերջի յ-ի անկումը ընդհանրացել ու վերածվել էր օրենքի, բառերը վերջից ձևույթներ ընդունելիս արտասանվում էին հին ձևով, ինչպես՝ շղթայ (արտաս. շղթա), բայց՝ շղթայք (արտաս. շղթայք), ծառայ (արտաս. ծառա)—ծառայք (արտաս. ծառայք) և այլն:

Վերը նշված բացառություն կազմող բառերից ու բառաձևերից մի քանիսի մասին կարելի է ասել, որ դրանք ևս մի ժամանակ վերջում ունեցել են յ ձայնորդը: Օրինակ՝ քո գերանունը ունի նաև քոյ ձևը, ըստ որում, իրրև ստացական գերանուն հոգնակի ուղղականում ունի միայն քոյք ձևը (չենք խոսում մյուս հոլովաձևերի մասին), նշված մյուս գերանունների զանազան ձևերն էլ ձևույթ ընդունելիս հանգես են դալիս յ-ով, ինչպես՝ նորայն, սոցայք և այլն (ստաց. նշ.). ապա բառը ունի նաև գուգահեռ ապայ ձևը: Մեր առանձին խոսվածքներում պատճառական բայերի հրամայականի եզակին վերջավորվում է ու-ով, ինչպես՝ վերո՛ւ (—վերցրու), իօն՛ւ (= իջեցրու) և այլն: Անկասկած է, որ այստեղ ու-ն կարող էր առաջանալ բառավերջի ոյ հնչյունակապակցությունից՝ պատմական հնչյունափոխությունամբ: Այդ օրենքը որպես հնչյունափոխական իրողություն հաստատուն է հայոց լեզվի համար. հմմտ. նաև գրական լեզվի այլ ձևերում՝ մարդու> մարդու, գնալոյ>գնալու և այլն: Նշանակում է՝ եթե հիշյալ տիպի բայերի բուն հրամայականի եզակին երբեք ունեցած չլիներ յ, ապա բարբառներում չէր կարող տալ ու: Մեզ թվում է, որ բարբառային քու գերանվան ձևը ևս առաջացել է նույն օրենքով՝ երբեմնի քոյ ձևից, թեև ոմանք գա բացատրում են դու գերանվան ազդեցությամբ:

Այսպիսով՝ գրության ստեղծման շրջանում քանի որ արձանագրվել է ժամանակի արտասանությունը, և որոշ բառեր ու բառաձևեր դուրս են մնացել վերջում յ-ի արտահայտման ընդհանուր կանոնից, նշանակում է, որ այդ ձևերում բառավերջի յ-ի անկման երևույթն սկսվել էր Ծ-րդ դարից առաջ, բայց դեռ այդ դարում մասնակի բնույթ էր կրում, բնագրկելով միայն որոշ սահմանափակ ձևեր: Այս հիմունքով էլ հիշյալ ձևերը ընդհանուր օրինաչափության (յ-ի արտահայտման) հանդեպ ներկայանում էին որպես բացառություններ: Մեր լեզվի պատմական դարգացումը այստեղ ընթացավ այն ուղղությամբ, որ հետագայում յ հնչյունի անկումը բառավերջում աստիճանաբար ընդհանրացավ, ընդգրկեց բոլոր բառերն ու ձևերը և վերածվեց հնչյունական օրենքի. իրրև բացառություն մնացին միայն մի քանի միավանկ բառեր, որոնք մինչև օրս էլ պահպանում են հին արտասանությունը (հայ, ճայ, նայ, «թաց, խոնավ», վայ, խոյ և այլն):

Սակայն երբ ընդհանրացավ այդ երևույթը, վերածվելով ընդհանուր օրենքի, Անշուշտ, երևույթի ընդհանրանալու և ընդհանուր օրենքի վերածվելու մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ այն դուրս է դալիս մասնակի բնույթ կրող առանձին դեպքերի սահմաններից, այն ձևերի շրջանակներից, որոնք մի ժամանակ գիտվում էին որպես բացառություն, ընդգրկում է ուրիշ բառեր և տարածվում նման բոլոր բառաձևերի վրա: Երևույթի ընդհանրանալու և օրենքի վերածվելու ընթացքի ու ժամանակի որոշման համար լուրջ արդեվ է հանդիսանում գրության ավանդականությունը: Հայտնի է, որ դարեր առաջ արտասանության մեջ ձևավորված հնչյունական օրենքը (տվյալ դեպքում յ-ի անկումը բառավերջում) մեր գրական լեզվում գրության մեջ չի օրինականացվել մինչև 1922 թ. ուղղագրական ռեֆորմը:

Այս հանգամանքներում միանգամայն ակնբախ է հարցի որոշման դժվարությունը: Մենք է այստեղ էլ հենվել գրավոր հուշարձաններում տեղ գտած ուղղագրական շեղումների վրա, որոնք այս կամ այն կերպ արտացոլում են ժամանակի արտասանության վիճակի առանձնահատկությունները: Ամենից վստահելի աղբյուրները վիճական արձանագրություններն են: Պետք է նշենք, որ ամենավաղ փաստերը հիշատակված են անթվակիր և միայն մոտավորապես որոշվող ժամանակի արձանագրություններում: Այգուհանդերձ՝ իրենց ստուգություններ գրանք միանգամայն վստահելի են, քանի որ նկարահանված ու վերծանված են հմուտ հայագետ-հնագետների կողմից: Առաջին փաստերը հանգիպում են Կ. Ղաֆաղարյանի կողմից հայտնաբերված և ուսումնասիրված (ինչպես և ուրիշ) մի քանի արձանագրությունների մեջ¹: Դրանք քաղաքի Գեորգ քահանայի տապանաքարի արձանագրության մեջ նույն անվան փոփոխված ձևը գործածված է առանց յ-ի՝ Գեորգա— «Այս գիրս Գեորգա քահանայի է»²: Վերծանությունը տառացիորեն հարադատ է լուսանկարին, որտեղ միանգամայն պարզ նկատվում է, որ նշված բառի վերջում գտնվող ա-ից անմիջապես հետո գալիս է հաջորդ բառի սկզբնատառը ք, ըստ որում հիշյալ ա-ն միանգամայն նույնական է մյուս բառերի նույն տառի հետ և կոմբինացիա չունի: Ակնհայտ է յ-ի բացակայությունը մատնանշված տեղում:

Հետևյալ երկու փաստերը տեղ են գտել Երևանի պատմության թանգարանում պահվող Գնթունյանց Դավիթ իշխանի տապանաքարի արձանագրության մեջ, գրանք են՝ որդու, Վասակա— «Այս է հանգիստ Դավթի Գրթունեաց տն որդու Վասակա բարեպա...»³: Ըստ գրաբարի հայտնի կանոնների նշված բառաձևերը, որպես սեռական հոլովի ձևեր, ա և ո հոլովիչներից հետո պետք է ունենային յ, բայց չունեն:

Բայց ինչ ժամանակաշրջանի են վերաբերում գրանք: Կ. Ղաֆաղարյանը ընդունում է 6-րդ դարը: «Հնագրական բոլոր տվյալների հիման վրա,— գրում է նա,— կարելի է Դավիթի տապանաքարերը վերագրել 6-րդ դարին, որովհետև 7-րդ դարին պատկանող մեզ հայտնի բոլոր արձանագրություններից էլ նրանք հին են իրենց գրչության ձևերով»⁴: Ասկա՝ «Պատմությանն անձանոթ է նաև Գնթունյաց Դավիթ իշխանը, թեև պարզ է, որ նրա տապանաքարը ևս 6-րդ դարին է պատկանում»⁵:

Հաջորդ փաստը գրաբարի ծառայ գրության գիմաց ծառա ձևի հիշատակությունն է, որ շատ ճիշտ կերպով մատնացույց է արել ու գնահատել Կ. Ղաֆաղարյանը⁶: Այդ ձևը ունի է Դավիթի Կաթողիկե ևկեղեցու կղմինդրե ծածկի արձանագրություններից մեկում: Արձանագրությունը թվական չունի, սակայն վերագրվում է 7-րդ դարի սկզբներին, քանի որ

¹ Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, «Հայկական գրի սկզբնական տեսակները», Երևան, 1939, էջ 83—88, «Դավիթ քաղաքը և նրա պեղումները», Երևան, 1952, էջ 243—251:

² Դավիթ քաղաքը և նրա պեղումները, Վերծանությունը՝ էջ 224, լուսանկարը՝ էջ 246:

³ Նույն տեղում. դժագիրը և լուսանկարը՝ էջ 245:

⁴ Նույն տեղում, էջ 245:

⁵ Նույն տեղում, էջ 246:

⁶ Նույն տեղում, էջ 250:

⁷ Գժագիրը տե՛ս Կ. Ղաֆաղարյան, «Հայկական գրի սկզբնական տեսակները», էջ 83, «Դավիթ քաղաքը և նրա պեղումները», էջ 247:

հիշյալ եկեղեցու վերջին նորոգութիւնը կատարված է 607—617 թվականներին¹:

Վաղ հիշատակութիւններէն է Նախիջևանի Արտավազդ Կամսարականի տապանաքարի արձանագրութեան (8-րդ դար) Հրահատա ձեռ' Հրահատ հատուկ անվան սեռական հոլովը առանց վերջին յ-ի²: Փաստը միանգամայն ստույգ է. ահադ. Հ. Օրբելու նման խոշոր հնագետը վերծանել է այն պարունակող արձանագրութիւնը՝ անձամբ լինելով տեղում: Սակայն Հ. Օրբելին կասկած է հայտնում ժամանակի մասին, գտնելով, որ արձանագրութիւնը հաղիվ թե գծագրված լինի Արտավազդ Կամսարականի թաղման ժամանակ³:

Բարեբախտարար ստույգ թվականով արձանագրված փաստեր կան դրան հաջորդող՝ 9-րդ դարից: Այս տեսակետից մեծ արժեք է ներկայացնում Արուճի ՅԺԶ (867) թվականի արձանագրութիւնը, որի լրիվ ու ճիշտ վերծանումը պատկանում է Գ. Հովսեփյանին⁴: Այս արձանագրութիւնը ուրիշ ընդօրինակողների մոտ լրիվ չէ, իսկ եղած մասն էլ ունի անհշտութիւններ, որոնք չենք հիշատակում:

Բնագիրը հետևյալն է.

«ՅԺԶ թուականին Հայոց յիշխանութի Աշոտոյ եւ ի տերութի Սմբատայ Հայոց ասպարապետի Բագրատունոյ եւ ի կաթաղիկոսութի Զաքարիայի եղեւ կոիւ ընդ Յարուճ եւ ընդ Կոշ եւ ընդ գաւառն. եւսար Արուճ զԿոշ եւ զգաւառն եւ կալաւ զԿոշա վանականն եւ ի Քրթավանին ընդ անկին մինթա նի վաճառեցին. ես Գրիգոր որդի Վառամա ծառա Սմբատա Բագրատունո եկի հրամանաւ Սմբատա եւ ես հաւասարեցի զՅուրն ընդ Կոշ եւ ընդ Յարուճ զինչ իւրեանց բնիկ ռասմ էր լել Սմ. եւ կէս Կոշա եւ Սմ. Արճո. արդ եթէ այլ ոք հակառակել ջանա այլ աւելի ռասմ յուզէ: ՅԺԸ: սուրբ հայրապետացն նզել լիցի եւ ի Սմբատա մահուամբ (բաց) պատուհասի:»

Այստեղ քննարկվող հարցին վերաբերող ձևերն են՝ զԿոշա, Վառամա, ծառա, Սմբատա Բագրատունո, Սմբատա, Կոշա, Արճո, ջանա, ի Սմբատա: Այս 10 բառաձևերը զգալի բաղադրանքութիւն ունեն. մեկը ուղղականով է (ծառա), մեկը բացարձակականով (ի Սմբատա), մեկը բայական դիմավոր ձև է՝ արտահայտված ներկա ժամանակի ձևով, բայց ապառնու նշանակութեամբ (ջանա), մնացած 7-ը սեռական հոլովաձևեր են եւ բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր օրենքին: Յ հնչյունի անկումը կատարված է և ա-ից, և՛ ու-ից հետո, թեև արձանագրութեան սկզբնամասում Յ բառաձևեր պահպանում են յ տառը (Աշոտոյ, Սմբատայ, Բագրատունոյ):

Նշված փաստերը «պատահական սխալներ» կամ «թյուրիմացութիւններ» չեն, դրանք թելադրված են բանավոր խոսքում ձևավորված հնչյունական որոշակի օրենքով: Գրութեան ավանդականութիւնը եւ բանավոր

¹ Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 246:

² Տե՛ս «Շոգակաթ», էջ 174, Կ. Ա. Օրբելու, «Шесть армянских надписей VII—X вв.», «Христианский Восток», Петроград, 1914, т. III, вып. I, стр. 80.

³ Կ. Ա. Օրբելու, там же, стр. 80—81.

⁴ Հիշյալ տեղում, էջ 177. լուսանկարը՝ տախտակ Ժ:

խոսքում ձևափոխված հնչյունական օրենքը ներկայացնող այս 13 ձևերը այստեղ ունեն 3-ի և 10-ի հարաբերություն, իսկ քանի որ ուղղագրությունն ավանդականությունը պահպանող ձևերից 2-ը (Սմբատայ, Բագրատունոյ)¹ կրկնված են հնչյունական օրենքը ներկայացնող ձևերի մեջ (առանց 3-ի), ուստի հաստատ կարելի է ասել, որ դրանք էլ նույն ձևով են արտասանվել:

Հաղարյան ճեմարանի ՅԼԶ (887) թ. ավետարանի սկզբնագիր հիշատակարանն ունի Վարդա սեռական հոլովածներ «... Ես Սահակ որդի Վարդա Վանանդացու...»², որը նույնպես այս երևույթն է ներկայացնում:

Այս փաստերը որոշակի ցույց են տալիս, որ արդեն 9-րդ դարում լրիվ կերպարանք էր ստացել արտասանություն մեջ բառավերջի յ հնչյունի անկման օրենքը, մասամբ արտացոլում գտնելով նաև գրություն մեջ: Սակայն գրավոր խոսքում ուղղագրության ավանդականության պահպանման տեսակետից յ տառը բառավերջում չարտահայտելը գիտվում էր իրրև չեղում, ուստի հնչյունական այդ փոփոխությունից հետո էլ երկար ժամանակ պահպանվեց գրության մեջ որպես բառավերջի «համբ տառ» և այն էլ ոչ միայն գրարարի, այլև աշխարհարարի համար (այստեղ՝ մինչև 1922 թ.): Ձևափոխված հնչյունական այս օրենքը, իհարկե, հաջորդ դարերում չխաթարվեց: Հենց նախորդ հարյուր թննարկման համար վերը բերված 10—11-րդ դարերին վերաբերող արձանագրություններում էլ կան նման փաստեր (Գրիգորո, Գագիա, Հասանա): Սակայն ավելի կարևոր էր հիշել վաղ շրջանի փաստերը:

գ) ՈՒ > Վ

Ձայնավորից առաջ հայերենի ու-ի պատմական հնչյունափոխությունն արտահայտվում է նրա աստիճանական թանձրացումով և վ-ի վերածվելով, ինչպես՝ աղուեւ-աղվես, լուանալ-լվանալ, Գուին-Վվին, տուեալ-տվյալ և այլն: Դա ընդգրկում է նաև բառափոխական ու բառակազմական գեպքերը, ինչպես՝ լեզու-լեզվի, լեզվանի, առու-առվի, առվակ, մեղու-մեղվի, մեղվանոց, մեղվապահ և այլն: Այս վերջին գեպքերում թեև զուգագրկում է շեշտափոխության երևույթը, սակայն հնչյունական փոփոխությունը սերտորեն կապվում է պատմականորեն ձևափոխված հնչյունական օրենքի հետ, այսինքն այն իրողության հետ, որ մեր լեզվի զարգացման որոշ շրջանում ընդհանրապես եթե ու-ն հանգես է գալիս ձայնավորից առաջ, ապա պետք է արտասանվի վ: Սակայն նկատելի է, որ այսօր էլ գեո որոշ բառերում երևույթը տատանումներ է տալիս, ինչպես՝ ժողովածուի || ժողովածվի, քնկնածուի || քնկնածվի և այլն, ըստ որում տարածված են առաջին ձևերը: Մի ժամանակ գրական աշխարհարարի մեջ գործածություն են ունեցել կարսնացվի, վաշխառվի և նման այլ ձևեր, որոնք այժմ նույնությամբ չեն գործածվում³, իսկ որոշ բառեր էլ առհասարակ չեն ենթարկվում ընդ-

¹ Գրարարի վաղ շրջանի համար ավելի ճիշտը՝ Բագրատունոյ:

² Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա (5 դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1931, էջ 84:

³ Հմմտ. Վ. Առաքելյան, «Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն», Երևան, 1955, էջ 83:

հասուր օրենքին: Մի կողմ թողնելով այդպիսի մասնակի դեպքերը, կարելի է տեսլ, որ դրական հայերենն ունի ձայնավորից առաջ ու-ի պատմական հնչյունափոխության ընդհանուր օրենքը: Այս օրենքը տարածվում է նաև գրարարյան բնագրերի արգի բնթերցման արտասանության վրա (նշ գրային հնչմամբ), բացառությամբ սակավ դեպքերի (հատկապես ու լծորդության բայերի առանձին ձևերում՝ լողուի, հեղուաք և այլն, որտեղ ու-ն Վ չի արտասանվում):

Եպատակ չունենալ ընդհանրապես քննարկել ու-ի հետ կապված հնչյունափոխված բոլոր իրողությունները: Այստեղ մեզ հետաքրքրում է այն հարցը, թե հայոց լեզվում երբ երևան եկավ ու-ի պատմական հնչյունափոխությունը ձայնավորից առաջ:

Առանձին հեղինակներ այն կարծիքն են հայտնել, որ ու-ի այդպիսի արտասանությունը գալիս է Ծ-րգ դարից (Հյուրշման, Մարկիարա, Ղ. Աղայան). այդ նշանակում է, թե ու-ն հենց Ծ-րգ դարում ձայնավորից առաջ բաղաձայն (վ) էր: Հ. Աճառյանը մանրամասն քննարկում ու հերքում է այդ տեսակետը ևս, հաստատելով, որ Ծ-րգ դարում ձայնավորից առաջ ու-ի հնչումը նույնական չէր ոչ Վ-ի և ոչ էլ ւ-ի հետ: Այդ հնչյունափոխությունը կատարվել է ավելի ուշ՝ աստիճանական ու դանդաղ բնթագրով: Առաջին ուղղակի փայտությունները Ծ-րգ դարից են, արտահայտված Սեանի ՅԻԳ (874) թ. արձանագրության մեջ: Արձանագրության բովանդակությունը պատմողաբար արտահայտվել է Ստ. Օրբելյանի հայտնի գրքում, սակայն բուն արձանագրությունը իր շատ արժեքավոր փաստերով գիտական աշխարհին հայտնի է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի և գ-ր. Կ. Ղաֆազարյանի հրատարակումով²: Այստեղ գրարարյան առաջ բառաձևը գծագրված է ավաք, որը ու-ի պատմական հնչյունափոխության արտացոլման արդյունք է: Պակաս կարևորություն չունի նաև թիվ նշանակող տառերի մոտ գրված լավ նշումը, որը (ի) բուին կամ բուալան բառերից է կրճատված և նույնպես ներկայացնում է արտասանական այդ փոփոխությունը: Եթե նույնիսկ սա սկզբնաղբի չլինի, ինչպես ընդունում է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը, ապա դարձյալ նշված փաստերը կարևոր են, քանի որ այդ ժամանակներից երևույթն իրեն զգալ է տալիս, ուստի մատնանշված ձևերը կարող էին առանց փոփոխության փոխանցված լինել սկզբնաղբից: Թվական ձևի համար հիշենք մի քանի տասնամյակ ուշ գործածված հետևյալ փաստերը. «3Մ թվական...»՝ Թալինի եկեղեցու 901 թ. արձանագրության մի բեկորի վրա (տարված էջմիածին)³, «3ԿԱ (?) թվականիս»՝ Մլրե թագուհու ավետարանի 912 (?) թ. սկզբնաղբի հիշատակարանում⁴ և այլն: Ավելի ուշ շրջանում և ոչ սկզբնա-

¹ Տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց գրերը», որտեղ հեղինակը հատկապես կանգ է առնում Հյուրշմանի և Ղ. Աղայանի կարծիքների վրա: Տե՛ս նաև «Հանդէս ամսօրեայ», 1922, № 10—12:

² Л. Меликсет-Бекоев, Новооткрытая надпись на Севане от 874 г. — «Памяти академика Н. Я. Марра (1864—1934)», М.—Л., 1938, стр. 409—415, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Երևանի հիշատակությունը Սեանի 874 թ. արձանագրության մեջ. — ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», Երևան, 1940, № 4—5, էջ 117—118: Կ. Ղաֆազարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, էջ 68, 88:

³ «Շողակաթ», էջ 178:

⁴ Յիշատակարանը ձեռագրաց, էջ 109: Թվականը վիճարկվում է, բայց 10-րդ դարի սկզբներից ավելի ուշ չէ:

գիր հիշատակարաններում փաստերը ավելի են, բայց հարկ չենք համարում բերել:

Սխալ չի լինի եզրակացնել, որ 9—10-րդ դարերում արդեն ձևավորվել էր ձայնավորից առաջ ու-ի կրած հնչյունափոխության օրենքը:

* * *

Մատնացույց արված փաստերը խիստ ուշագրավ են և զգալի արժեք են ներկայացնում հայոց լեզվի պատմության՝ ուսումնասիրության տեսակետից. ընդգրկելով ընդհանուր պատմական հնչյունափոխության հիմնական երևույթներից մի քանիսը, նրանք շատ բան են ասում մեր լեզվի հնչյունային կողմի զարգացման բնույթի մասին՝ դրավոր շրջանում: Դրանք, իհարկե, բնավ չեն սպառում թեկուզ միայն շոշափված երևույթների հետ կապված բոլոր հարցերը: Այստեղ շեշտը դրվեց նրանց մի կողմի վրա միայն: Հնչյունափոխական երևույթի կադմավորման ու ձևավորման մոտավոր ժամանակաշրջանի համար Նշվող փաստը չի կարելի գիտել որպես ինչ որ հանկարծական դոյացություն: Ինչպես քանիցս ասվել է համապատասխան տեղերում, հնչյունափոխական այս երևույթները ժամանակի ընթացքում, դանդաղ ու աստիճանական զարգացմամբ, երևան են գալիս արտասանության մեջ, և դրավոր խոսքի մեջ թափանցածներն էլ դրանց արտացոլումներն են, որոնց հիման վրա եզրակացություններ են արվում նաև արտասանության մասին: Այդ թափանցումները, բնականաբար, քիչ են, քանի որ հակասում են հին վիճակը ներկայացնող ուղղագրական օրենքներին. այս հանգամանքն էլ ավելի է մեծացնում նրանց արժեքը լեզվի մեջ պատմականորեն դոյացող երևույթների հատկանշման տեսակետից: